

Իսկ Անդրիայի մանաւանդ Մանչէստըրի մէջ հաստատուած Թուրքահայ վաճառականք՝ 1875էն ապին առին ա՛լ կայուն դաղթականութեան մը կերպարանքն իրենց տնօրէն ժողովով, առաջնորդով, կիրակնօրեայ կենցաղատէր համահարութիւններով և ընտանեկան կացու կազմով, որ օտար ուրտի մը մէջ կառնէին ևս աւելի քաղցր հրապոյր:

Մեծին Բրիտանիայի լուրջ և կիկղոպեան ուրտին մէջ Հայոց այս սկզբնական հաստատութիւնն և գաղթականութիւնն արեւելահաղորդ՝ թէպէտ իր էութեամբը գործնական ու վաճառական էր, ունեցաւ սակայն՝ գործնակօնին ու վաճառականին հետ՝ իմացական ու բարոյական բարեհեղ ազդեցութիւններ Թուրքահայոց արթնալիտ մասին վրայ:

Տասը քսան տարիէ հետէ իտալականէն Ֆրանսականին դարձած հայ սիրտն ու միտքը՝ կարգ մը սիրուն և վարդավառ նորութեանց հետ՝ անխտիր օրինակելու վրայ էին Ֆրանսական աստանդիկ բարքերէն ու կարգերէն բաց, թեթեւ, անհիմն և փո՛ւտ ալ բաներ մը, որ՝ անհաշտ Արեւելքի ծանր ու շարքաշ բարքերուն հետ՝ շատ մասով վնասաբեր պիտի ըլլային, մանաւանդ ջոկ մը անխոնձեմ գաղափարական միջնորդներու ձեռքով, որ զարմանալի մեծամտութեամբ մը տալ սկսած էին ինքիրենց իմաստասէրի, քաղաքակրթիչի կարեւորութիւն մը, և կը ջանային ամէն փետրազարդ հնարքով բերել իրենց ըմբռնումներուն հանուրին կենցաղական ու կրօնական գնացքը, անոր ընտանեկան ու եկեղեցական անարատ կենցաղը: Շալկած իրենց Վօլգէրը, Տիտրոն և նմաններն՝ ՚ի վաճառ կը հանէին ամէն նորաձեւութիւն, ամէն փոփոխութիւն, ամէն գեղգեկութիւն՝ յանո՛ւն կրթութեան յառաջդիմութեան և իմաստասիրութեան: